ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

10.05.2017թ. կնքված N «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-05/17» ծածկագրով էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկման մատուցման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան <<14>> դեկտեմբեր 2017թ

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավար Է. Գևորգյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Եսայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 10.05.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-05/17» գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 7.3 կետով, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով՝ կողմերը որոշեցին

1.1 Պայմանագրի 4.1 կետով սահմանված <22485000 (քսաներկու միլիոն չորս հարյուր ութսունհինգ հազար)> բառերը փոխարինել <24985000 (քսանչորս միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար)> բառերով:

1.2 Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը լրացնել հետևյալ խմբագրությամբ՝

Էլեկտրոնային աճուրդի համակարգի լիարժեք գործառության համար անհրաժեշտ է համագործակցող համակարգերի հետ ինտեգրում: Ինտեգրումը ներառում է.

1. ARMEPS PPCM համակարգից E-auction համակարգին տվյալների տրամադրում,
2. E-auction համակարգից ARMEPS PPCM համակարգին տվյալների տրամադրում,
3. E-auction համակարգին՝ ARMEPS-ի տվյալների բազային միանալու հնարավորության տրամադրում:

Վերը նշված տվյալների տրամադրումը հնարավոր է իրականացնել որոշակի ծրագրավորման աշխատանքների արդյունքում՝ տվյալները համապատասխան ֆորմատի բերելով:

1.3 Պայմանագրի վճարման ժամանակացույցը խմբագրել համաձայն կից հավելվածի /կցվում է/:

2. Այլ պայմաններ

2.1. 10.05.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-05/17» ծածկագրով ծառայությունների մատուցման պայմանագրում նշված մյուս կետերը մնում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու /2/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և տրվում են Կողմերին:

2.3 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | Կ Ա Տ Ա Ր Ո Ղ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «Այյունեթվորքս» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Ադամյան 1 | ք. Երևան, Պուշկին 38/1, շին 55 |
| ՀՎՀՀ՝ 02629081 | «Ինեկոբանկ» ՓԲԸ, Կորյուն մ/ճ |
| Հ/Հ 900011017523 | Հ/Հ 2050422215691001 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ՀՎՀՀ 02588485 |
| ՀՀ ՖՆ Աշխատակազմի ղեկավար | Տնօրեն՝ |
| Է. Գևորգյան | Վ. Մերանգուլյան |

Հավելված
10.05.2017թ կնքված N «ՀՀ ՖՆ ԲԸՀԾՁԲ-05/17» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
<< 14 >> դեկտեմբեր 2017թ կնքված համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ | | | | | | | | 4497000 | 8994000 | 13491000 | 17988000 | 24985000 | 24985000 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մ. Ադամյան 1
ՀՎՀՀ՝ 02629081
Հ/Հ 900011017523
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ Աշխատակազմի ղեկավար
Է. Գևորգյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկին 38/1, շին 55
«Ինեկոբանկ» ՓԲԸ, Կորյուն մ/ճ
Հ/Հ 2050422215691001
ՀՎՀՀ 02588485
Տնօրեն՝
Վ. Մերանգուլյան
/ստորագրություն/
Կ.Տ.